10.56653/18290361-2025.15-49

Ռուբեն Վարդանյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
rubenvardanyan1@gmail.com

Հասմիկ Հովհաննիսյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
hassmik@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)*

Հիմնաբառեր. դրամագիտություն, դրամագիտական ժողովածու, դրամագիտության բաժին, դրամագետներ, դրամագիտական աշխատություններ:

Հայկական դրամագիտության պատմությունից

Հայկական դրամագիտությունը սկսել է ձևավորվել Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում՝ սելևկյան, պարթևական, հռոմեական, ինչպես նաև բյուզանդական ու խաչակրաց դրամագիտության շրջանակներում և առնչությամբ: Առաջին հրատարակությունը, որում հիշատակվում է Կիլիկյան Հայաստանում թողարկված մի դրամ, լույս է տեսել Փարիզում (Tristan 1644): Ավելի ուշ, Կյուրիկեի և Կիլիկիայի հայ թագավորներից մի քանիսի դրամներին անդրադարձել է Բրոսսեն (Brosset 1939): Հին և միջնադարյան հայկական դրամների առաջին հետևողական ուսումնասիրողներից մեկը եղել է Վիկտոր Լանգլուան, որի աշխատությունները լույս են տեսել Փարիզում (Langlois 1855, Langlois 1859): 1890 թ. հրատարակված գրքում, Էռնեստ Բաբելոնը ներկայացրել է Փարիզի Ազգային գրադարանի ժողովածուի հին հայկական դրամները՝ մանրամասն նկարագրություններով ու մեկնաբանություններով (Babelon 1890):

Պատմամշակութային անցյալի նկատմամբ աճող հետաքրքրությունը նպաստեց, որ հայ մտավորականներից ոմանք զբաղվեն հին հայկական դրամներ հավաքելով: Հայր Կղեմես Սիպիլյանը, հայր Սիմոն Անտոնյանը, Սերովբե Ալիշանը մեծ դեր են խաղացել Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության թանգարանների դրամագիտական ժողովածուների կազմավորման ու հարստացման գործում: Կղեմես Սիպիլյանը դարձավ նաև հայ դրամագիտության սկզբնավորողներից մեկը՝ գիտականորեն դասակարգելով Կիլիկյան հայկական թագավորության դրամները: Նրա հեղինակած գիրքը հետմահու լույս տեսավ Վիեննայում (Սիպիլեան 1892):

* Ստացվել է 23.01.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 25.01.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

20-րդ դարում հայկական դրամների ուսումնասիրությանն անդրադարձել են ինչպես եվրոպական, հայ, այնպես էլ ամերիկյան և ռուս գիտնականները: Կարապետ Բասմաջյանն առաջինն էր, որ ներկայացրեց ոչ միայն հայ, այլև օտար տիրակալների կողմից Հայաստանում թողարկված կամ Հայաստանին վերաբերող դրամները՝ Վենետիկում հրատարակած աշխատության մեջ (Բասմաջեան 1936): Հայ դրամագիտության զարգացման մեջ առանձնահատուկ ներդրում ունեն ամերիկահայ անվանի դրամագետներ Ջարեհ Պտուկյանը (Պտուկեան 1963, Պտուկեան 1971, Bedoukian 1978, Bedoukian 1979 և այլն) և Եղիա Ներսեսյանը (Nercessian 1984, Nercessian 1988, Nercessian 2006, Nercessian 2008 և այլն), որոնք իրենց տասնյակ հոդվածներում ու գրքերում անդրադարձել են հին, միջնադարյան և նորագույն ժամանակաշրջանի հայ դրամագիտության գրեթե բոլոր խնդիրներին: 1971 թ. Լոս Անջելեսում ստեղծված Հայ դրամագիտական ընկերակցությունը 1975 թվականից մինչև 2014 թ. հրատարակում էր *Հայ դրամագիտական հանդես*-ը՝ գիտության այս ճյուղին նվիրված միակ հայկական հանդեսը, որի անփոփոխ խմբագիրն էր Ե. Ներսեսյանը: Հայ դրամագիտական ընկերակցության բոլոր հրատարակությունների տասնյակ օրինակներ պարբերաբար ուղարկվել են հայրենիք և ՀՊԹ դրամագիտության բաժնի աշխատակիցների միջոցով բաշխվել են հանրապետության գրադարաններին:

Դրամագիտական և մերձդրամագիտական հավաքածուների ստեղծման ընթացքը Հայաստանում

Հայաստանում դրամագիտության զարգացմանը նպաստող շրջադարձային նշանակություն ունեցավ Հայաստանի պատմության թանգարանի ստեղծումը 1919 թ.: Թանգարանի դրամագիտական հավաքածուի հիմքը կազմեցին Մոսկվայի Արևելյան Լեզուների Լազարյան Ճեմարանի թանգարանի (5411 դրամ), Անիի հնադարանի (1803 դրամ) և Հնությունների պահպանության կոմիտեի նյութերը (Շահնազարյան 1937, 6): 1930 թվականին Թանգարանի Հնագիտական բաժինն ուներ 11030 իր, որի 3/4-ը դրամներն էին՝ 8277 դրամ (Շահնազարյան 1937, 6): 1931 թ. լուծարվում է Էջմիածնի թանգարանը, որի ժողովածուի 2200 դրամները հանձնվում են ՀՊԹ-ին (Շահնազարյան 1937, 16) (այն ժամանակ՝ Կուլտուրայի պատմության թանգարանին)՝ հարստացնելով դրամագիտական ֆոնդը: Նույն թվականին Թանգարանը Հնության պահպանության կոմիտեից ստանում է 1155 հին դրամներ, որոնք վերջինիս աշխատակիցները ձեռք էին բերել հնագիտական պեղումների և գիտարշավների ընթացքում (Շահնազարյան 1937, 16): 1930-ական թթ. առաջին կեսում Թանգարանը նաև առանձին անհատներից է ձեռք բերում հին դրամներ՝ 952 հատ: 1935 թ. վերջին դրամագիտական ֆոնդը բաղկացած է եղել 12584 հին դրամներից (Շահնազարյան 1937, 17):

1930-ական թթ. Հայաստանում սկսված և 1960-ականներից ծավալում ստացած սիստեմատիկ հնագիտական պեղումները դարձան թանգարանի դրամագիտական հավաքածուի հարստացման մի նոր աղբյուր: Գառնիի, Արտաշատի, Դվինի և այլ հնավայրերի հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված մեծաքանակ մեկուսի դրամները և դրամական գանձերը, տեղագրական և հնագի-

տական որոշակի կոնտեքստի առկայության շնորհիվ, առանձնահատուկ կարևորություն ունեն դրամագիտական հետազոտությունների համար:

Դրամագիտական ժողովածուն համալրվում էր նաև հարյուրավոր անհատների՝ մասնավորապես սփյուռքահայերի նվիրատվությունների շնորհիվ: Այդ ալիքն իր բարձրակետին հասավ 1960–80-ական թվականներին: Սփյուռքի տասնյակ հայրենանվեր անհատներ և կազմակերպություններ Հայաստանի մայր թանգարանին էին նվիրում պատմամշակութային արժեք ներկայացնող թանգարանային նմուշներ՝ այդ թվում հազարավոր դրամներ ու հուշամեդալներ: Առավելապես հենց նրանց ենք պարտական Կիլիկիայի հայկական թագավորության դրամների հրաշալի ժողովածու ունենալու համար, քանի որ ժամանակակից Հայաստանում այդպիսի դրամներ գրեթե չեն հայտնաբերվում:

Դրամագիտական ժողովածուն ոչ քիչ չափով հարստացել է նաև թանգարանի կողմից կատարվող ամենամյա գնումների շնորհիվ, երբեմն նաև իրավապահ մարմինների կողմից բռնագրավված դրամագիտական արժեքները թանգարանին հանձնելու ճանապարհով: Դրանց թվում են տասնյակ դրամական գանձերը, որոնք, եթե խաթարված կամ մասնատված չեն հայտնաբերողների կողմից, դրամաշրջանառությունը լուսաբանող առաջնակարգ աղբյուր են հանդիսանում:

ՀՊԹ դրամագիտական ֆոնդում այժմ պահվում է մ.թ.ա. 5-րդ դարից մինչև մեր ժամանակների ավելի քան 88.000 մետաղադրամ: Նրանում, բնականաբար, ավելի լավ են ներկայացված պատմական տարբեր փուլերում Հայաստանում շրջանառության մեջ եղած դրամների խմբերը: Անտիկ շրջանի դրամների շարքում՝ Արին բերդում գտնված, մ.թ.ա. 5-րդ դարի վերջով թվագրվող միլետյան երկու փոքրիկ արծաթե դրամները և Սիսիանում հայտնաբերված աթենական տետրադրախման հնագույնն են ներկայիս Հայաստանում հայտնաբերվածների շարքում: Հելլենիստական շրջանի դրամների մեջ կարևոր խումբ են մ.թ.ա. 2–1-ին դարերի սելևկյան և պարթևական արքաների թողարկումները: Տարբեր ժամանակների հայ տիրակալների դրամներից ժողովածուում ներկայացված են Ծոփքի (մ.թ.ա. 3-րդ դ. երկրորդ կես – մ.թ.ա. 2-րդ դ.), Մեծ Հայքի (մ.թ.ա. 1-ին դ. – մ.թ. 2-րդ դ. սկիզբ), Կոմմագենեի (մ.թ.ա. 1-ին – մ.թ. 1-ին դդ.), Լոռիի Կյուրիկյան թագավորության (11-րդ դ. երկրորդ կես), Կիլիկիայի հայկական իշխանապետության (1080–1197 թթ.) և թագավորության (1198–1375 թթ.) դրամները:

Ժողովածուի բավական ներկայանալի մասն են կազմում Հռոմեական հանրապետության և կայսրության դրամները, որոնցում մեր պատմությունը լուսաբանող կարևոր աղբյուր են նաև Հայաստանի նվաճման առիթով թողարկված հռոմեական դրամները (մ.թ.ա. 1-ին դ. երկրորդ կես – մ.թ. 2-րդ դ. երկրորդ կես):

Միջնադարյան դրամների ժողովածուն (3–15-րդ դդ.) ՀՊԹ դրամագիտական ֆոնդում ամենամեծն է: Նրանում լավ արտացոլված է Հայաստանում շրջանառության մեջ եղած դրամական կազմը, որը գերազանցապես բաղկացած է հարևան կամ Հայաստանը նվաճած պետությունների դրամներից՝ ներառելով սասանյան, արաբական, բյուզանդական, սելջուկյան, մոնղոլական, վրացական, մահմեդական փոքր իշխանությունների հազարավոր դրամներ: Միջնադարյան դրամնե-

րի կազմում իր ուրույն տեղն ունեն բուն Հայաստանից հեռու, Միջերկրական ծովի արևելյան ափերին 11–14-րդ դարերում ծավալված աշխարհաքաղաքական իրադարձություններում ակտիվ մասնակցություն ունեցած Կիլիկյան Հայկական պետության դրամները:

Նոր և նորագույն շրջանների (14–19-րդ դդ.) պարսկական, օսմանյան, եվրոպական և ռուսական դրամները, որոնք առավելապես հայտնաբերված են Հայաստանում, հաճախ գանձերի ձևով, կազմում են ՀՊԹ դրամագիտական ժողովածուի կարևոր մասերից մեկը:

Ինչպես որոշ այլ թանգարաններում, ՀՊԹ-ում ևս դրամագիտական ֆոնդում են պահվում թղթադրամները, հուշամեդալները, պարգևանշանները, ժետոնները, կնիքները: Թանգարանն ունի 1918–20 և 1921–23 թվականների Հայկական վերականգնված պետության կողմից թողարկված թղթադրամների և չեկերի բավական նշանակալի հավաքածու:

Նամականիշների ժողովածուի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Վահան Մալեզյանի՝ շուրջ 3000 նմուշ պարունակող ալբոմը: Այդ հավաքածուն, որը բաղկացած է Հայաստանի Հանրապետությունում 1918–1923 թթ. մակադրոշմված ռուսական և ՀՀ-ի կողմից թողարկված հայկական, գիտականորեն դասակարգված նամականիշներից, 1925 թ. Փարիզի Ֆիլատելիստական ցուցահանդեսում արժանացել է բրոնզե մեդալի:

Դրամագիտական և մերձ-դրամագիտական առարկաների ընդհանուր թիվը մոտավորապես 170.000 միավոր է (ՀՊԹ-ում պահվող առարկաների շուրջ 42%), որից, ինչպես նշվեց վերևում, ավելի քան 88.000-ը մետաղադրամներն են:

Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնի պատմությունից

Դրամները թանգարանի ստեղծումից ի վեր կազմել են այնտեղ պահվող առարկաների ամենամեծ խմբերից մեկը: 1944 թվականին ստեղծվում է դրամագիտական բաժինը, որը մինչև 1955 թ. ղեկավարել է Ասլան Շահնազարյանը: Նրա օրոք սկսվել է դրամագիտական հավաքածուի գիտական մշակումն ու համակարգումը: Այնուհետև, մինչև 1992 թվականը, բաժինը գլխավորել է Խաչատուր Մուշեղյանը, որին, իրավամբ, կարելի է համարել հայաստանյան դրամագիտության հիմնադիր: Խ. Մուշեղյանը մեծ ներդրում ունի ինչպես բաժնի կայացման, ժողովածուի հարստացման ու դրամների դասակարգման, այնպես էլ դրամագիտական ուսումնասիրությունները նոր որակի բարձրացնելու և թանգարանը գիտական հետազոտությունների կենտրոն դարձնելու գործում (Մուշեղյան 1956, Մուշեղյան 1973, Մուշեղյան 1983 և այլն): 1946-ից ՀՊԹ-ի գիտատեխնիկական բաժնի աշխատակից Մարգո (Լենա) Կարապետյանը 1977-ին նշանակվում է դրամների, թանկարժեք մետաղների, զենքերի և ավանդների հաշվառման և պահպանման սեկտորի վարիչ: Ֆոնդային աշխատանքից բացի, նա ուսումնասիրում էր թանգարանում պահվող կիլիկյան հայկական դրամները: 1992–2000 թթ. բաժնի վարիչն էր Հենրիկ Սարգսյանը, որը նշանակալի ավանդ ունի մասնավորապես հայկական մեդալային արվեստի պատմության ուսումնասիրման ասպարեզում: 2000 թվականից բաժինը

ղեկավարում է Ռուբեն Վարդանյանը: 2021-ին դրամագիտության բաժինը վերանվանվեց դրամագիտական սեկտոր՝ հնագիտության բաժնի կազմում:

ՀՊԹ դրամագետների առօրյան և ձեռքբերումները

Սեկտորի փոքրաթիվ անձնակազմը զբաղված է դրամագիտական ժողովածուն համալրելու, նյութերը գիտականորեն մշակելու, կարգավորելու, թանգարան մուտքագրված նյութերը համապատասխան մատյաններում գրանցելու, նյութերը լուսանկարելու և լուսանկարների շտեմարան ստեղծելու, մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների համար հայեցակարգեր մշակելու, դրանց համար նյութերի ընտրության, որոշ դրամների նկատմամբ վերականգնողական միջամտություն կատարելու, ցուցահանդեսների համար բացատրական տեքստեր գրելու, այցելուներին մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու, գիտական հոդվածներ և գրքեր հրատարակելու, ինչպես նաև ընգրկուն գիտական կատալոգ-հետազոտությունների միջոցով թանգարանի դրամագիտական ժողովածուն մասնագիտական հանրույթին և դրամների ուսումնասիրությամբ հետաքրքրվող ընթերցողներին մատուցելու աշխատանքով: 2011թ. լույս տեսավ *Միլլոգե* ձևաչափով հրատարակված առաջին հատորը (Վարդանյան 2011): Այնուհետև տպագրվեց *Միլլոգե հայկական դրամների. Կիլիկիա* շարքի առաջին հատորը (Վարդանյան, 2014), որին հետևեցին ևս երկու հատորներ (Վարդանյան 2020, Վարդանյան 2022): Զուգահեռաբար պատրաստվում էին և շուտով հրատարակվեցին ՀՊԹ բյուզանդական դրամների բավական մեծ հավաքածուն ներկայացնող *Միլլոգե բյուզանդական դրամների. Հայաստան* շարքի երկու հատորները (Հովհաննիսյան 2016, Հովհաննիսյան 2023թթ.): 2021թ. լույս տեսավ գերազանցապես ՀՊԹ դրամագիտական հավաքածուի տվյալների վրա հիմնված աշխատություն, որում վերլուծվում է Հայաստանի դրամական տնտեսությունը 3–10-րդ դարերում (Զոհրաբյան 2021): Ավելի վաղ՝ նույն հեղինակը և Է. Խուրշուդյանը հանրությանն էին ներկայացրել թանգարանի ուշագրավ հավաքածուներից մեկի՝ սասանյան դրամների վերաբերյալ աշխատությունը (Khurshudian, Zohrabian 2000): 2018 թվականին ՀՀ Կենտրոնական բանկը լույս ընծայեց ազգային դրամի ներդրման 25-ամյակին նվիրված *Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը* գիրքը, որը հեղինակել էր ՀՊԹ և ԿԲ դրամագետներից կազմված խումբը (ՀԴՊ 2018):

Վերջին քսան տարում ՀՊԹ դրամագետները մասնակցել են քսանհինգ ժամանակավոր և մշտական ցուցահանդեսների կազմակերպմանը Հայաստանում և արտերկրում: Թանգարանի այցելուներին ներկայացվել են տարբեր ժամանակների և երկրների հազարավոր մետաղադրամներ, հարյուրավոր թղթադրամներ, մեդալներ, պարգևանշաններ ու նամականիշներ՝ համապատասխան բացատրագրերով: 2023–2024 թվականներին թանգարանի նորացված սրահներում տեղ են գտել միաժամանակ ցուցադրվող աննախադեպ քանակությամբ, մ.թ.ա. 5-րդ դարից մինչև մ.թ. 15-րդ դարերի՝ հին և միջնադարյան մետաղադրամներ (630 նմուշ): 2025 թվականին սրանց կավելանան Հայաստանի տարածքում հայտնաբերված՝ 16–19-րդ դարերի դրամներ:

Եզրակացության փոխարեն

Դրամներն ունեն պատմության տարբեր փուլերում քաղաքական, տնտեսական, մշակութային իրողությունների ու դրանցում տեղի ունեցած փոփոխությունների ընթացքն արտացոլելու ունակություն: Դրամները պատմողական, վիմագրական և հնագիտական տեղեկատվությունը լրացնելու, հաստատելու կամ հերքելու կարողությամբ օժտված բարձրարժեք սկզբնաղբյուր են: Դրամների մետաղը, կշիռը, չափը, նրանց վրայի պատկերներն ու գրությունները, հայտնաբերման հնագիտական կոնտեքստը (ինչը, ցավոք, հնագետներին և դրամագետներին շատ հաճախ հասու չէ՝ հին դրամների նկատմամբ հանրության մեջ գոյություն ունեցող անառողջ սպառողական վերաբերմունքի պատճառով), իրենց ամբողջության մեջ, պատմական որոշակի հատվածի՝ դարերի, տասնամյակների, և նույնիսկ տարիների վերաբերյալ խոսուն վկաներ են: Այդ «պզտիկ, բայց ճստիկ» առարկաները, որոնցով բավական հարուստ է Հայաստանի պատմության թանգարանը, դեռ շատ բան ունեն պատմելու՝ օգնելով մեզ ավելի լավ հասկանալ պատմությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղբյուրներ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ 1937 – Շահնազարյան Ա., Պատմական ակնարկ թանգարանի հնագիտական բաժնի (Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 20-ամյակի առթիվ), *ՀՊԹ Արխիվի ֆ.1 ց. 6, գ. 50 գործ*, 1937:

Աշխատություններ

ԲԱՍՄԱՋՅԱՆ 1936 – Բասմաջեան Կ., *Հայկական ընդհանուր դրամագիտութիւն և Հայաստանի վերաբերեալ դրամներ*, Վենետիկ, 1936:

ՋՈՀՐԱԲՅԱՆ 2021 – Ջոհրաբյան Ա., *Հայաստանի դրամական տնտեսությունը 3–10-րդ դարերում. Սասանյան և արաբական շրջան*, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2021:

ՀԴՊ 2018 – *Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը*, Հեղինակներ՝ Ռ. Վարդանյան, Ա. Ջոհրաբյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Վարդանյան, Գ. Մուղալյան, Երևան, ՀՀ կենտրոնական բանկ, 2018:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2016 – Հովհաննիսյան Հ., *Sylloge Nummorum Byzantinorum Հայաստան, Անանուն ֆոլիսներ. Ա դար (969–1028), Հայաստանի պատմության թանգարան, h. 3*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2016:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2023 – Հովհաննիսյան Հ., *Sylloge Nummorum Byzantinorum Հայաստան, Բյուզանդական դրամներ (1028–1059), Հայաստանի պատմության թանգարան, h. 4*, Երևան, «ԼԱՍ Պրինտ» հրատարակչություն, 2016:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973 – Մուշեղյան Խ., *Հայաստանի դրամական գանձերը, h. 1*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983 – Մուշեղյան Խ., *Դրամական շրջանառությունը Հայաստանում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983:

ՊՏՈՒԿԵԱՆ – Պտուկեան Զ., *Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ և մեդալիոններ*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1971:

ՊՏՈՒԿԵԱՆ 1963 – Պտուկեան Զ., *Կիլիկեան Հայաստանի դրամները*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1963:

ՍԻՊԻԼԵԱՆ 1892 – Սիպիլեան Կ., *Դասաւորութիւն Ռուբենեան դրամոց*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1892:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2011 – Վարդանյան Ռ., *Միլլոգե հռոմեական դրամների. Հայաստան. h. 1. Հռոմեական հանրապետություն.* Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2011:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2020 – Վարդանյան Ռ., *Sylloge Nummorum Armenorum. Հայաստան. Հայաստանի պատմության թանգարան. Կիլիկիա. Հատոր 5. Լևոն 4-րդ, Կի, Կոստանդին 3-րդ, Կոստանդին 4-րդ, Լևոն 5-րդ*, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2020:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022 – Վարդանյան Ռ., *Sylloge Nummorum Armenorum. Հայաստան. Երևան. Հայաստանի պատմության թանգարան. Կիլիկիա. Հատոր 2.1. Հեթում 1-ին*, Երևան, «ԼԱՍ Պրինտ» հրատարակչություն, 2022:

МУШЕГЯН 1962 – Мушегян Х., *Денежное обращение Двина по нумизматическим данным*, изд-во АН Арм. ССР, 1962.

BABELON 1890 – Babelon E., *Les Rois de Syrie d'Armenie et de Commagene*, Paris, Chez C. Rollin & Feuardent, 1890.

BEDOUKIAN 1978 – Bedoukian P. Z., *Coinage of the Artaxiads of Armenia*, Oxford, University Press, 1978.

BEDOUKIAN 1979 – Bedoukian P. Z., *Coinage of Cilician Armenia*, Printed in the United States of America, 1979.

BROSSET 1839 – Brosset M.-F., *Monographie des monnaies arméniennes*, St. Petersbourg, Typographie de l'Académie Impériale des Sciences, 1839.

KHURSHUDIAN, ZOHRABIAN 2000 – Khurshudian E., Zohrabian A., *Sasanian Coins of Armenia*, Almaty, Типография ТОО "PRINT-S", 2000.

KOVACS 2016 – Kovacs F., *Armenian Coinage in the Classical Period*, Classical Numismatic Group, Inc., Lancaster/London.

LANGLOIS 1855 – Langlois V., *Numismatique de l'Arménie au moyen âge*, Paris, Chez M. Camille Rollin, 1855.

LANGLOIS 1859 – Langlois V., *Numismatique de l'Arménie dans L'antiquité*, Paris, 1859.

NERCESSIAN 1984 – Nercessian Y., *Armenian Numismatic Bibliography and Litterature*, Los Angeles, Published by Armenian Numismatic Society, 1984.

NERCESSIAN 1988 – Nercessian Y., *Bank Notes of Armenia*, Los Angeles, Published by Armenian Numismatic Society, 1988.

NERCESSIAN 2006 – Nercessian Y., *Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia*, Los Angeles, Published by Armenian Numismatic Society, 2006.

NERCESSIAN 2008 – Nercessian Y., *Catalogue of Armenian Coins*, Los Angeles, Published by Armenian Numismatic Society, 2008.

TRISTAN 1644 – Tristan de Sainct Amant J., *Commentaires historiques, contenans l'histoire générale des empereurs, impératrices, caesars et tyrans de l'Empire romain*, tome 3, Paris, 1644, p. 588–589.

Ruben Vardanyan
PhD in History
History Museum of Armenia
rubenvardanyan1@gmail.com

Hasmik Hovhannisyan
PhD in History
History Museum of Armenia
hassmik@yahoo.com

NUMISMATIC DEPARTMENT OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA: PAST AND PRESENT (BRIEF OVERVIEW)

Keywords: numismatics, numismatic collection, numismatics department, numismatists, numismatic studies

This review briefly outlines the past and present of Armenian numismatics. In the 19th century, European, mainly French scholars developed a growing interest in Armenian

coins, leading to the emergence of scientific research on ancient and medieval Armenian coins. From the first years of the restoration of statehood in Armenia, with the creation of the History Museum (1919), among other historical and cultural values, special attention was paid to the coin collection. Initially, the basis of the numismatic collection was made up of materials from the Museum of the Lazarev Seminary of Oriental Languages in Moscow, the Ani Museum of Antiquities, the Ejmiatsin Museum and the Committee for the Protection of Antiquities.

Systematic archaeological excavations, which began in the 1930s and have continued with great intensity since the 1960s, have become one of the important sources of replenishment of the numismatic collection.

Since the 1940s–1950s, hundreds of people, especially our compatriots in the Diaspora, have expressed a desire to make donations to the museum, and this trend reached its peak in the 1960s–1980s.

Since the 1930s, the Museum annual purchases have been a significant source of enrichment for its numismatic collection.

In addition to approximately 88,000 coins, the numismatic fund also contains thousands of commemorative medals, orders, seals, banknotes and postage stamps. The total number of all numismatic and near-numismatic objects is approximately 170,000 units.

The Numismatics Department was established in 1946. Initially, its head and only employee (!) was Aslan Shahnazaryan, under whom the scientific development and systematisation of the numismatic collection began. From 1955 to 1992 the department was headed by Khachatur Musheghyan, who can be rightly considered the founder of numismatics in Armenia. From 1992 to 2000 the department was headed by Henrik Sargsyan, who made a significant contribution to the study of the history of Armenian medals. Since 2000 the department has been headed by Ruben Vardanyan.

In 2021, the Numismatics Department was renamed the Numismatics Sector within the Archaeology Department.

The current small number of staff in the Numismatic Sector continue to be involved in current museum work as well as scholarly activities, publishing articles and books based primarily on material from the Museum's collections.

Рубен Варданян
Кандидат исторических наук
Музей истории Армении
rubenvardanyan1@gmail.com

Асмик Оганнисян
Кандидат исторических наук
Музей истории Армении
hassmik@yahoo.com

ОТДЕЛ НУМИЗМАТИКИ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ: ПРОШЛОЕ И НАСТОЯЩЕЕ (КРАТКИЙ ОБЗОР)

Ключевые слова: нумизматика, нумизматическая коллекция, отдел нумизматики, нумизматы, нумизматические исследования.

Данный обзор кратко описывает прошлое и настоящее армянской нумизматики. В 19 веке у европейских, в основном французских, ученых возник повышенный интерес к армянским монетам, что привело к появлению научных исследований древних и

средневековых армянских монет. С первых лет восстановления государственности в Армении, с созданием Исторического музея (1919), среди прочих историко-культурных ценностей особое внимание уделялось коллекции монет. Первоначально основу нумизматической коллекции составили материалы из музея Лазаревской семинарии восточных языков в Москве, Анийского музея древностей, Эчмиадзинского музея и Комитета по охране древностей.

Одним из важных источников пополнения нумизматической коллекции стали систематические археологические раскопки, начавшиеся в 1930-е годы и продолжающиеся с большой интенсивностью с 1960-х годов.

Начиная с 1940–1950-х годов сотни людей, особенно наши соотечественники в диаспоре, выражали желание сделать пожертвования музею, и эта тенденция достигла своего пика в 1960–1980-е годы.

Начиная с 1930-х годов ежегодные закупки музея стали значительным источником пополнения его нумизматической коллекции.

Помимо болле чем 88 000 монет, нумизматический фонд содержит тысячи памятных медалей, орденов, печатей, банкнот и почтовых марок. Общее количество всех нумизматических и около-нумизматических объектов составляет приблизительно 170 000 единиц.

Отдел нумизматики был создан в 1946 году. Первоначально его руководителем и единственным сотрудником (!) был Аслан Шахназарян, при котором началась научная разработка и систематизация нумизматической коллекции. С 1955 по 1992 год отдел возглавлял Хачатур Мушегян, которого по праву можно считать основателем нумизматики в Армении. С 1992 по 2000 год отдел возглавлял Генрих Саркисян, внесший значительный вклад в изучение истории армянских медалей. С 2000 года отдел возглавляет Рубен Варданян.

В 2021 году отдел нумизматики был переименован в сектор нумизматики при отделе археологии.

Нынешние немногочисленные сотрудники сектора нумизматики продолжают заниматься текущей музейной работой, а также научной деятельностью, публикуя статьи и книги, основанные преимущественно на материалах из коллекций музея.